ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL
ADMINISTRATION OF
REPUBLIC OF ARMENIA

STATE MIGRATION SERVICE

"06" 10 2010 N 1/1-1496

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊՐՆ. Դ. ՄԱՐԳՍՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆ՝
ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊՐՆ. Է. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊՐՆ. Հ.ՔՈՒՇԿՅԱՆԻՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊՐՆ. Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԳՍՅԱՆ

Ի կատարումն Ձեր ս/թ. հոկտեմբերի 1-ի թիվ 02/12-10/11830-10 հանձնարարականի, և մշտապես գործող նախարարական սոցիալական կոմիտեի ս/թ. սեպտեմբերի 24-ի նիստի արձանագրության 4-րդ կետի համապատասխան, կից ներկայացնում եմ "ՀՀ կառավարության և Կատարի պետության կառավարության միջև Կատարի պետության տարածքում աշխատուժի օգտագործման մասին" համաձայնագրի նախագծի՝ ՀՀ նախագահի աշխատակազմից և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված խմբագրական բնույթի դիտողությունների հաշվառմամբ լրամշակված տեքստը:

Միաժամանակ նախարարական սոցիալական կոմիտեի ս/թ. սեպտեմբերի 24-ի նիստում հարցի քննարկման ընթացքում արտահայտված կարծիքների վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

1. Համաձայնագրի տեքստը փոխադարձության հիման վրա /այսինքն, որ համաձայնագիրը վերաբերի նաև ՀՀ տարածքում Կատարի պետության աշխատուժի օգտագործմանը/ դարձնելու վերաբերյալ առաջարկը իրատեսական չէ հետևյալ պատճառներով.

   ա/ Կատարի պետությունն ունի փոքրաթիվ բնակչություն /գնահատականների համաձայն շուրջ 500.000/ և խիստ արագ տեմպերով զարգացող տնտեսություն, և ունենալով աշխատուժի մեծ պահանջարկ, ինքն է աշխատուժ "ներմուծում" իր երկիր;

   բ/ Կատարի պետությունը ոչ մի պետության հետ չի կնքել իր աշխատուժի արտահանման վերաբերյալ պայմանագիր;

53

Հ. Քարտաշյան

059-22350
07 10 10

գ/ ընդ որում Կատարի պետությունում աշխատանքային գործունեություն ծավալող երկրների քաղաքացիների աշխարհագրությունը շատ լայն է՝ սկսած ասիական երկրներից վերջացրած եվրոպական զարգացած երկրներով:

2. Մտահոգությունը, որ Կատարում մեր աշխատողներին կառաջարկվեն վատ պայմաններ հիմնավոր չէ, քանի որ ելնելով Կատարի պետություն իմ այցելության ընթացքում կատարած ուսումնասիրությունից կարող եմ փաստել, որ այնտեղ աշխատող, օրինակի համար յուրաքանչյուր 2 բուժքրոջը տրամադրվում է առանձին սենյակ, իսկ յուրաքանչյուր բժիշկին՝ առանձին բնակարան իր բոլոր հարմարություններով: Բժիշկների աշխատավարձը սկսվում է 1.500 ԱՄՆ դոլլարից, և կարող է հասնել մինչև 7-8 հազար ԱՄՆ դոլլարի, իսկ բուժքույրերի աշխատավարձը միջինում կազմում է 850 ԱՄՆ դոլլար, և կարող է հասնել 2-2.5 հազար ԱՄՆ դոլլարի: Ընդ որում, գործատուն հոգում է ինչպես աշխատողների Կատար մեկնելու և հայրենիք վերադարձի, այնպես էլ արձակուրդի հետ կապված ճանապարհածախսը:

3. Մեր պետությունների միջև դիպլոմների ճանաչման անհրաժեշտության վերաբերյալ կարծիքը միանգամայն ընդունելի է: Հարցը անհրաժեշտ կլինի ներառել համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների օրակարգում:

Ելնելով վերոհիշյալից առաջարկում եմ "ՀՀ կառավարության և Կատարի պետության կառավարության միջև Կատարի պետության տարածքում աշխատուժի օգտագործման մասին" համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին" ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը:

Տեղեկացնում եմ որ վերոհիշյալը համաձայնեցված է ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ պրն Ա. Գևորգյանի հետ:

Առդիր 4 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ Գ. ԵԳԱՆՅԱՆ

0033 ք.Երևան, Հր. Քոչարի 4
Հեռ.՝ (37410) 225-865 Ֆաքս՝ (37410) 225-824
Էլ. փոստ՝ migration@dolphin.am

4 Hr. Kochar St., Yerevan 0033
Tel.: (37410) 225-865, Fax: (37410) 225-824
E-mail: migration@dolphin.am

Ոչ պաշտոնական թարգմանություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Կատարի Պետության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության աշխատուժի օգտագործման մասին

Կատարի Պետության կառավարությունը և
Հայաստանի Հանրապետության կառավարությունը,
երկու երկրների միջև հաստատված բարիդրացիական կապերը ամրապնդելու նպատակով,
ինչպես նաև Կատարի Պետության տարածքում Հայաստանի Հանրապետության աշխատուժի օգտագործումը կազմակերպելու նպատակով
համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կատարի Պետության աշխատանքի նախարարությունը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը պետք է հաստատեն անհրաժեշտ ընթացակարգեր սույն Համաձայնագրի պայմանների ապահովման համար:

ՀՈԴՎԱԾ 2

Հայաստանի Հանրապետությունից աշխատուժի հավաքագրումը և նրա տեղափոխումն ու օգտագործումը Կատարի Պետության տարածքում պետք է կարգավորվի համաձայն երկու երկրներում գործող համապատասխան օրենքների և ընթացակարգերի:

ՀՈԴՎԱԾ 3

1. Կատարի Պետության աշխատանքի նախարարությունը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն կփոխանցի Կատարի Պետության գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերը Հայաստանի Հանրապետության աշխատուժով համալրելու վերաբերյալ հայտերը: Հայաստանի Հանրապետության միգրացիոն պետական ծառայությունը հնարավոր միջոցների և ռեսուրսների սահմանում պետք է փորձի բավարարել այդ հայտերում առաջարկվող պահանջները:
2. Եթե գործատուն Կատարի Պետությունում ցանկություն է հայտնել հավաքագրել և աշխատանքի ընդունել հատուկ որակավորում պահանջող հայաստանյան աշխատուժի, ապա այդ որակավորումների մասին պետք է նշում կատարի իր՝ Կատարի Պետության աշխատանքի նախարարությանն ուղղված հայտի մեջ:
3. Կատարի գործատուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը կամ աշխատանքի նախարարության կողմից լիազորված աշխատանքի տեղավորման գրասենյակը պետք է իրականացնի աշխատողների ընտրության, ինչպես նաև նրանց Հայաստանի Հանրապետությունից Կատարի Պետություն տեղափոխման ողջ գործընթացը:

ՀՈԴՎԱԾ 4

Թափուր աշխատողների համալրման վերաբերյալ հայտերում պետք է նշված լինեն պահանջվող որակավորումները, մասնագիտությունը և աշխատանքային փորձը, պայմանագրի գործողության ժամկետը, աշխատանքի մանրամասն պայմանները՝ մասնավորապես աշխատավարձի չափը, աշխատանքից արձակման նպաստը, փորձաշրջանի տևողությունը, տեղափոխման ու բնակարանի հետ կապված հարցերը, ինչպես նաև այն բոլոր հիմնական

տեղեկատվությունը, որը հնարավորություն կտա աշխատողներին կողմնորոշվելու աշխատանքային պայմանագիր կնքելու մասին որոշում կայացնելու հարցում:

ՀՈԴՎԱԾ 5

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի Կատարի Պետությունում աշխատելու ցանկություն ունեցող անձանց բժշկական հետազոտման, անձնագրի և ելքի թույլտվության ձեռքբերման գործընթացները դյուրին դարձնելու համար, ինչպես նաև նրանց տրամադրի տեղեկատվություն Կատարում աշխատանքային օրենսդրության, աշխատանքային պայմանների, ծախսերի և կենսամակարդակի վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 6

Կատարի Պետության կառավարությունը կարող է ձեռնարկել գործողություններ Հայաստանի Հանրապետությունից ընդունած և կնքված աշխատանքային պայմանագրերի գործողության ժամկետն ավարտած ցանկացած թվով աշխատողների վերադարձման ուղղությամբ: Նույն գործընթացը կարող է նախաձեռնվել նաև նախքան կնքված պայմանագրերի գործողության ժամկետի ավ արտը, եթե աշխատանքի անհրաժեշտություն չկա : Այդ դեպքում պետք է ապահովել աշխատողների աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի կամ Կատարի Պետության «Աշխատանքի մասին» օրենքի համաձայն ձեռքբերված այլ իրավունքները:

ՀՈԴՎԱԾ 7

Կատարի Պետության կառավարությունը կարող է գործընթացներ ձեռնարկել վերադարձնելու Հայաստանի Հանրապետությունից ընդունած ցանկացած թվով աշխատողների, եթե նրանց ներկայությունը Կատարի Պետությունում հակասում է պետության հանրային շահերին կամ ազգային անվտանգությանը՝ չխախտելով աշխատողների աշխատանքային պայմանագրով կամ Կատարի Պետության «Աշխատանքի մասին» օրենքով ձեռքբերված իրավունքները:

ՀՈԴՎԱԾ 8

Ա. Առաջին անգամ աշխատանքի ընդունելիս գործատուն հոգում է աշխատողների՝ աշխատանքի նպատակով Հայաստանի Հանրապետությունից Կատարի Պետություն ուղևորության բոլոր ծախսերը, ինչպես նաև աշխատանքն ավարտելուց հետո Կատարի Պետությունից վերադարձի ծախսերը: Գործատուն նաև հոգում է արձակուրդի ընթացքում աշխատողների երկկողմանի ճանապարհածախսը: Այս ծախսերը չեն ներառում անձնագրի տրամադրման ծախսերը կամ այլ վճարումներ:

Բ. Գործատուն ազատվում է աշխատողի տունդարձի ծախսերից հետևյալ երկու դեպքերում.

1. եթե նախքան աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի լրանալը աշխատողը հրաժարվում է աշխատանքից,
2. եթե աշխատողը խախտում է կատարում, որի հետևանքով նրան առանց նախազգուշացման և աշխատանքից արձակման նպաստին սպասման ազատում են աշխատանքից՝ համաձայն Կատարի Պետության «Աշխատանքի մասին» օրենքի:

ՀՈԴՎԱԾ 9

1. Կատարի Պետությունում հայաստանյան աշխատողների աշխատանքի ժամկետները և պայմանները սահմանվում են գործատուի և աշխատողի միջև կնքվող անհատական աշխատանքային պայմանագրով՝ համաձայն սույն Համաձայնագրին կցված օրինակելի Աշխատանքային պայմանագրի: Պայմանագիրը պետք է ներառի կողմերի

իրավունքներն ու պարտավորությունները, աշխատանքի հիմնական պայմանները, որոնք չեն հակասում սույն Համաձայնագրին և Կատարի Պետության «Աշխատանքի մասին» օրենքին:

2. Աշխատանքային պայմանագիրը տրամադրվում է արաբերեն, հայերեն և անգլերեն լեզուներով, չորս բնօրինակով, որոնցից մեկը պահվում է գործատուի մոտ, երկրորդը՝ աշխատողի, երրորդը՝ Կատարի Պետության աշխատանքի նախարարությունում, չորրորդը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունում:

ՀՈԴՎԱԾ 10

Անհատական աշխատանքային պայմանագիրը պետք է մանրամասն ներառի գործատուի պարտավորությունները՝ կապված աշխատողի բնակարանի և դրա տեսակի, կամ բնակարանի վարձի վճարման և բժշկական սպասարկման հետ:

ՀՈԴՎԱԾ 11

Աշխատանքային պայմանագրի արաբերեն տարբերակը միակն է, որը ճանաչվում է Կատարի Պետության աշխատանքի նախարարության և դատարանների կողմից: Գործատուն չի կարող որևէ փոփոխություն կատարել աշխատանքային պայմանագրի դրույթներում, բացի աշխատողի աշխատանքի պայմանների բարելավումից, որը պետք է հաստատի Կատարի Պետության աշխատանքի նախարարությունը:

ՀՈԴՎԱԾ 12

Դոհայում կնքված աշխատանքային պայմանագրերը հաստատվում են Կատարի Պետության աշխատանքի նախարարության և Դոհայում Հայաստանի Հանրապետության դեսպանատան կամ հյուպատոսական հիմնարկի կողմից: Հայաստանի Հանրապետությունում կնքված պայմանագրերը հաստատվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունում և այդ երկրում Կատարի Պետության դեսպանատան կամ հյուպատոսական հիմնարկի կողմից:

ՀՈԴՎԱԾ 13

1. Կատարի Պետության աշխատանքի նախարարության լիազոր մարմինը պետք է վերահսկի սույն Համաձայնագրի դրույթների իրականացումը:

2. Եթե գործատուի և աշխատողի միջև առաջանում է ցանկացած անհամաձայնություն աշխատանքային պայմանագրի առնչությամբ, հարցի բարյացակամ լուծումը գտնելու նպատակով բողոքը ուղղվում է աշխատանքի նախարարություն: Եթե չի հաջողվում գտնել հարցի բարյացակամ լուծում, բողոքն ուղղվում է Կատարի Պետության դատական մարմիններին:

ՀՈԴՎԱԾ 14

Աշխատանքային պայմանագիրը դադարում է գործելուց նրա գործողության ժամկետի լրանալու օրը՝ առանց նախապես այդ մասին ծանուցելու: Եթե գործատուն ցանկություն է հայտնում երկարաձգել պայմանագրի գործողության ժամկետը, նա այդ մասին գրավոր տեղեկացնում է աշխատողին պայմանագրի ավարտի ժամկետից առնվազն երեսուն օր առաջ:

ՀՈԴՎԱԾ 15

Աշխատողն իրավունք ունի իր աշխատավարձից արված խնայողությունները փոխանցել համաձայն Կատարի Պետության համապատասխան ֆինանսական կարգավորումների:

ՀՈԴՎԱԾ 16

Կողմերը ստեղծում են միացյալ հանձնաժողով՝ կազմված յուրաքանչյուր կողմից ոչ ավելի, քան երեք անդամից, ներքոհիշյալ միջոցառումներն իրականացնելու նպատակով՝

1. համակարգել երկու կառավարությունների միջև սույն Համաձայնագրի իրականացման ընթացքը և այս ուղղությամբ նախաձեռնել անհրաժեշտ գործողություններ.
2. մեկնաբանել սույն Համաձայնագրի դրույթների վերաբերյալ վեճերը և հարթեցնել իրականացման ընթացքում առաջացած ցանկացած տարաձայնություններ.
3. քննարկել Կատարի Պետությունում հասանելի աշխատանքային հնարավորությունները՝ ներառյալ ընդհանուր տեղեկատվություն Կատարի Պետությունում զարգացման ծրագրերի, դրանց հետ կապված պոտենցյալ աշխատանքային հնարավորությունների, աշխատանքի տեսակների ու կարգերի, և անհրաժեշտ հմտությունների, և դրանց օգտագործման Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պատրաստակամության մասին.
4. առաջարկել անհրաժեշտության դեպքում սույն Համաձայնագրի դրույթների ամբողջական կամ մասամբ վերանայում կամ երկարաձգում:

Հանձնաժողովը այլընտրանքային կհանդիպի տարին մեկ անգամ երկու երկրներում և, երբ դա անհրաժեշտ է:

ՀՈԴՎԱԾ 17

Սույն Համաձայնագրում կարող են փոփոխություններ և լրացումներ կատարվել երկու կառավարությունների փոխադարձ համաձայնությամբ և սույն Համաձայնագրի կնքման համար միևնույն պահանջվող ընթացակարգերին հետևելուց հետո:

ՀՈԴՎԱԾ 18

Երկու Պայմանավորվող Կողմերը սույն Համաձայնագիրը վավերացնում են, և այն ուժի մեջ է մտնում դրա համար նախատեսված վավերացման ընթացակարգերի վերաբերյալ փաստաթղթերի փոխանակման օրվանից: Այն ուժի մեջ կլինի երեք տարի ժամկետով՝ երկարաձգվելով նույն ժամանակաշրջանով, մինչև Պայմանավորվող Կողմերից յուրաքանչյուրը սույն Համաձայնագրի գործողության ժամկետի լրացման օրվանից վեց ամիս առաջ գրավոր ծանուցի դադարեցման իր մտադրության մասին:

Ի հաստատումն վերոհիշյալի, համապատասխան կառավարությունների կողմից պատշաճ կարգով լիազորված ներքոստորագրյալներս ստորագրեցինք սույն Համաձայնագիրը:

Կատարված է Դոհայում -------- / ------/ 14 ---- -ի ------- -ին, արաբերեն, հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի տարբեր մեկնաբանությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Կատարի Պետության կառավարության կողմից	Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից